

տիկ տետրակը կ'ստանայ անփոխարինելի կարեւորութիւն մը, քանի որ կը լուսաբանէ վիճակը երկիրի մը և այնպիսի ժամանակամիջոցի մը մէջ, երբ մարդիկ կամ աւելի ճիշդ քողաքակիրթ աշխարհը շատ քիչ բան գիտէին Ափրիկէի խորը՝ լեռներու վրայ թառած և աշխարհէն մեկուսացած հապէշ քրիստոնեայ ազգին և իր երկրամասին վրայ:

Ե.

ԹԻԻԹԻԻՆՃԻԻ ՈՒՂԵԳՐՈՒԹԵԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Ըլլալով չափազանց սակաւքան, Յովհաննէս Թիւթիւնճիի ուղեգրութիւնը աւելի ծանօթագրութիւն մը ըլլալ կը թուի, քան ճամգորդութեան մը նկարագրութիւնը: Երկու տարուան շարժուն կեանքի մը իբր պատկերացում, շատ փոքր ծաւալ ունի այս գործը և շատ ժլատ է՝ նոյնիսկ անհրաժեշտ տեղեկութիւններ տալու մէջ: Օրինակ՝ բնաւ Հապէշիստանի Հայերով չէ զբաղած, ինչ որ մեծ շահեկանութիւն մը պիտի տար իր գործին:

Ասով հանդերձ գերծ չէ հետաքրքրական ծանօթութիւններէ, և ուշադիր ընթերցում մը պիտի հաստատէ, թէ անոնք ճիշդ են առ հասարակ և ստոյգ: Յովհաննէս Թիւթիւնճի, հակառակ անոր որ առասպելական և բոլորովին անծանօթ երկիրի մը վրայ կը խօսի, բնաւ չէ ուզած չափազանցութիւններով կամ անհեթեթութիւններով լեցնել իր ուղեգրութիւնը:

Անիկա չափազանց պարզ ոճով մը գիրի առած է (գրեթէ աշխարհաբար) ինչ որ տեսած է կամ լսած, որով ուղղամիտ տեղագրող մը եղած է: